

ԳԼՈՒԽ Զ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆՍՄ

ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ԴԷՊՔԵՐ

Եղիազարի Հակաթոռ Կաթողիկոսութեան դէմ Յակոբ Զուղայեցիի կատարած բազմաթիւ դիմումները՝ տնտեսական տաղնապի դուռ կը բանան էջմիածնի համար մեծագումար պարտքերու բարդումով: Ժամանակակից եւ ականջալուր ճանապարհորդ Շարտէն անդրադառնալով Յակոբ Կաթողիկոսին ծախսերուն, կ'ըսէ. «... Չեմ գիտեր ճիշտ ո՛րչափ դրամ ծախսեց այս դատին մէջ. 800.000 ոսկիի կը բարձրացնեն անոր դումարը: Միայն գիտեմ որ ան կը պարտի 500.000 ոսկի, զորս առած է Կ. Պոլսէն եւ ծախսած է այս գեղեցի՛կ նպատակին համար: Ան փոխ առաւ նախ Հայերէն ինչ որ կըրցաւ. եւ երբ տեսաւ՝ թէ անոնցմէ այլեւս ոչինչ կընար առնել, փոխառութիւն ըրաւ Թուրքերէն: Վերջապէս ընդհանուր կերպով իր վարկը կորսնցուց. եւ միաժամանակ ըստիպուեցաւ դատէն հրաժարիլ եւ հեռանալ Թուրքիայէն, ուր ոչինչ կընան ընել սնանկացած մարդիկ: Պատրիարքը կարծեց որ պիտի կարենայ պարտաւորել Պարսկաստանի Հայերը, որոնք Կ. Պոլիս կ'երթեւեկեն,